

Հ Ա Ո Ց Ի

Rédaction du Journal arménien

ARCHALOUYCE

(EGYPTE)

LE CAIRE

# ԱՐՁԱՅԻՆ

ՊԵՏԱԳՐԱԲ

ՆԳԻՊՏՈՍ

Տարեկան գրե. ողջ 30

ԱՐՏԱՍԱՅՄԱՆ

Տարեկան գրե. ողջ 10

Փոստատար՝ ՅԱԵԼՈՒՍՏ ԳԵՐՈՒ ՓՈՍՏԱՐԷՆ ԳԵՐՈՒՄԸ ԳԵՐՈՒ ԱՊՐԻ ԲՆԱԿԻ .

Թե՛ ԱՐՇԱՒԱՆՈՍԻ և թե՛ ՏՊԱՐԱՆԻՆ վերաբերեալ միջախան խնդրոց հաւար պե՛տ է դիմել ԽՆԲԱԳՐՈՒՄԵՆ ԽԱՍՏԵՆՈՂ ԻՆՏԵՐՆԱՒԱՍՏԱՆԻՆ, որ է՛

ԱՐՁԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՂԱՔԱԿԱՆ


ԱՆԿԱԻ ՀԱՅԱԹԵՐԹ

ԳԸ ՇՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ ՕՐԵՐԸ

ՊԵՏԱԳՐԱԲ

ԱՐՏՕՐԵԱԿ ԵՐԿՈՒՇԱԿԱՆ ԿՕՌՍԵՎԱՐՈՒԹԵՆԷՆ

ՀԱՏԸ 20 ՓԱՎ ՈՂՁ



Ա. Չ. Մ. Կ. Ր. Տ. Ի. Ի. Ե. Թ. Ա. Ն. Գ. Ր. Ա. Ն. Ի. Կ. Ե. Ա. Ն.

Ազգային երեսփոխան և հիմնադիրներէն Հ. Բ. Ը. Միտրեան  
Լիազօր Տեսուչ Ազգ. Կայսրական Դիւանին  
Կենսագրութիւնը գտնել «Սփինթ» անուն գրքին մէջ :

## ՕՍՍ. ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

ԲԱՑՈՒՄԸ

ԵՒ

ԱԱՀՄԱՆԱԿՐԱԿԱՆ ՎԵՂԱԳԵՏԻՆ

ԳԱՀԱՃՍՈՒՐ

Ամսոյս 2/15 ին Սահմանադրական Թուրքիոյ Խորհրդարանին երկրորդ տարեշրջանի բացումը տեղի ունեցած է Զրպանի պալատին մէջ, որ այնչափ ձիգ տարիներ Ուլթան Սուրատի բանտը եղաւ : Արդէն ասկէ առաջ գրած է ինք թէ՛ Զրանդանի այդ ծովեզերեայ շքեղ պալատը նորոգութիւններ կը կրէր, յարմարցուելու համար Խորհրդարանական նիստերուն Խորհրդարանի բացման օրին համար՝ ամենէն նշանակելի արձանագրութիւնն է Սահմանադրական վեհապետ Սուլթան Մեհմետ Ե. ի գահաճառը, զոր յատենի խորհրդարանին կարգացած է վարչապետ Հիւսէյն Հիւլի բաշա՝ բարձր և յորտակ ձայնով մը : Ինչպէս հեռագրիներն ալ ծա-

նուցին, վեհապետին գահաճառը լաւ ապաւորութիւն թողած է թէ՛ ներկաներուն, և թէ՛ բոլոր թուրք չրջանակներու մէջ ալ :

Դիտողներ ալ կան թէ՛ գահաճառին մէջ զանց եղած է Ալպանական և Կրեոական հարցերուն մասին անհրաժեշտ եղած ակնարկութիւնները :

Ահա Թուրքիոյ Վեհապետին Դահաճառը .

Յարգելի Մերախոսակներ և երեսփոխաններ

«Գոհութիւն կը մատուցանեմ ամենակարգին որ բարեհաճեցաւ Սահմանադրական չրջանի մը մէջ սկսել տալ իմ թագաւորութիւնս և թողլ տալ որ իմ գահակալութեանս առաջին տարւոյն մէջ իսկ Սահմանադրական վարչութեան արտայայտութիւնն եղող ազգային ժողովին երկրորդ տարեշրջանին բացումը կատարեմ, և այս ժողովին անդամոց բարի գալուստ մաղթեմ :»

Եւ ինչ որ փրկութեան ճանապարհ մը կը հրամայէ խորհրդակցական և խորհրդարանական վարչութիւնը :

«Այս ճամբուն մէջ յարատեւելով պիտի կրնանք ձեռք բերել մեր ընկերական ու քաղաքական կեանքին համար այնչափ անհրաժեշտ եղած միութիւնն ու զօրութիւնը :

Իմ ամենախիթի լազանացս առարկան կը կազմեն սահմանադրական օրէնքին պահպանումը, ամբողջութեամբ, և մեր խորհրդարանական գրութեան յարակից սկզբունքներուն գործադրութիւնը :

Աստուծոյ օգնականութեամբ և մտքորէին հոգեկան անկողնութեամբ, իմ բոլոր կարողութեամբս և հպատակներուս հետ պիտի աշխատեմ այս նպատակին համեմունքով : Ինքզինքս երկնային կը համարեմ այդ պարտաւորութեանս մէջ զբոնուեցալ իմ հպատակներուս հետ և այս կերպով ալ հաստատեցի թէ երազութեան գաղափարները զօրացած են Մայր-Հայրենիքին բոլոր զաւակներուն քով : Քաղաքացիներուն իրաւաստութեանց և պարտականութեանց հաւասարութիւնն ապահովող Սահմանադրութեան պայմաններուն ու հիմնական օրէնքին որոշ արամադրութիւններուն մէջ բնական հետեւներն էր նաև ընդարձակել զինուորական ծառայութիւնը որուն ընդունուեցան անխտիր մեր բոլոր հպատակները : Այս ընդարձակումը կոչուած է բարձրացնել պետութեան ուժն ու մեծութիւնը : Մեր ազգային յեղաշրջումին պատմութեան ամենակարեւոր դէպքերէն մէկը կը նկատեմ զայն : Բանակի հայրենեաց զաւակներուն սրտին մէջ պիտի ապաւորէ ճշմարիտ եղբայրութեան զգացումը :

Այս տարւան ռազմափորձերուն մէջ մեր բանակն ու նաւատորմը յառաջիմուկութիւններ յայտ բերին, որոնք առաջին անգամ տեղի ունենալուն համար, աւելի զնահատելի են : պարտաւոր ենք շնորհակալ ըլլալ որ Հայրենիքը պաշտպանելու և խաղաղութեան ամրապնդումն ապահովելու պաշտօն ունեցող ցամաքային ու ծովային մեր ուժերուն կողմակերպութիւնը կատարելագործենք :

«Փառք Ամենաբարձրուն, երկրին ներքին կացութիւնն ամենին մտահոգութիւն չի ներշնչեր եմէնի մէջ, Հոտէյոսի յարակից Ձէյոյիէ պաւտակին, ինչպէս նաև Ասիի մէջ յառաջ եկած դէպքերուն հետեւեալ Մեր կառավարութիւնը փութաց անհրաժեշտ ամեն միջոց սնորհներ : Պարտաւոր ընթացի մէջ գտնուած ցեղերն հի-

մա հնազանդութիւն կ'յայտենն : Միւս կողմէ, կարգ մը դէպքեր ալ պատահեցան Գոսովայի նահանգին Լուսա գաւառակին մէջ, բայց այս դէպքերն ամենեւին կարեւոր հանգամանք չունին : Եւ անշուշտ հանրային կրթութեան և Սահմանադրութեան բարիքներուն ծաւալումով այս կարգի իրողութիւններ ապագային չպիտի կրկնուին :

«Պէտք է լրջօրէն և փութալանութեամբ գործի ձեռնարկել Հայրենիքի համար մեր ընդարձակ երկրին հողային բնական գանձերը, և այսպէս աւելցնելու համար ընդհանուր բարօրութիւնը : Բարեհոտութեան պէտք ունի նաև մեր հանրային կրթութիւնը, յորում փափաքելի բոլոր յառաջիմուկութիւնները չկրցան սակաւին կատարուել : Վերջապէս, պարտաւոր ենք ապահովել նաև զարգացումը մեր ճարտարագործութեան : Ինչպէս նաև մեր հանրօրում շինութեանց, որք մեր պէտքերուն գոհացում տալէ հեռու են :

Իմ ամենաշեղմ փափաքս է իրագործուած տեսնել ելեւմտական հաւասարակշռութիւնը, որ ամեն բարենորոգումներու հիմն ու խորհիսն է : Ամենամեծ խնամքով հոգ տարուեցաւ կարելի բոլոր խնայողութիւններն ընել 1326 տարւան ընդհանուր ելեւմտացոյցին մէջ որ ժողովից ներկայացուեցաւ : Այս խնայողութիւններուն հակառակ, ելեւմտացոյցին մէջ հաւասարակշռութիւնը ձեռք բերել կարելի չեղաւ, բայց մաքսի յաւելման և մեծ նախարհներու հաստատման մեր ժրգիւրներն երբ իրականութիւն գրտնեն, անոցմէ յառաջ գալիք հասոյթի առաւելութիւնը, ինչպէս նաև ընդհանուր արոց բաշխման ու գանձման գրութիւնը բարեօրելու համար կատարուած ուսումնասիրութիւնը բացը գոցելու պիտի ծառայեն, և այս կերպով աւելի պիտի բարձրանայ մեր դրամական վարկը, որ այնքան ապահովիչ հանգամանք մը առաւ դրամական վերջին գործողութեան առիթով :

«Իր առաջին նստաշրջանին մէջ ժողովից աշխատեցաւ խորհրդակցելու սահմանադրական հիմանց ու սկզբունքներուն ամբողջական վերաբայ : Ինչպէս նաև ընդհանուր բարեկարգութեան հաստատման վրայ ներկայ տարեշրջանին մէջ պիտի զբաղի կառավարութեան կողմէն ներկայացուելիք նոր օրինադրութիւնը որք կը վերաբերին երկրին տնտեսական ու քաղաքական կեանքին : Եւ...»

նաև օրինաց ազդեցութեամբ բարեկարգութեան ու անդորրութեան ամրապնդման : Այս օրինազօծութեան մէջ մասնաւոր յիշատակութեան արժանի են վաճառականութեան, սեփականութեան իրաւունքներու, շրջանաւոր տեղափոխութեամբ իրաւարար տեսանկերու կազմութեան, նահանգներու ընդհանուր վարչութեան օրէնքները, ինչպէս նաև Պատմ. օրինադրքին յատուկ օրինազօծերը :

«Տէրութեանց հետ մեր յարաբերութիւնները բարեկամական են : Հաճոյքով կը դիտենք ընդհանուր իրազարգացման պահանջներու համար տէրութեանց կողմէ եղած ջանքերը : Այդ ազնիւ նպատակին անկեղծ նախանձաւորն ենք նաև մենք : Իմ կառավարութիւնս իր բացարձակ իրաւունքներն և օրինական շահերն անկեղծ պահելու հոգածու գտնուելով հանդերձ, պատիւ մը կ'նկատէ սակայն բարեկարգութեան և խաղաղութեան էջական մէկ տարրն հանդիսանալ :

«Վերջապէս, մասնաւոր գոհունակութեամբ մը յիշատակել կուզեմ այն լուսաւորեալ և հայրենասիրական ջանքերը, զորս օրէնքադիր երկու ժողովներն ի յայտ բերին իրենց առաջին նստաշրջանի միջոցին : Ամենակարողէն խնդրելով որ իսկապարհ յաջողութիւն շնորհէ ձեր աշխատութեանց, բացուած կը հուշակամ խորհրդարանական երկրորդ տարեշրջանը :»

**ՆԱՄԱԿ ԵՐՈՒՍԱՂԵՄԵՆ**

**ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎԻՃԱԿԸ**

Ազգին օրին վրայ բացուած կզերական վէթերը, որ գոյացու անպարտաճանաչ վարդապետներու եսամոլութեամբ, և ճարակ գտու պատրիարքներու, և Ազգ. վարիչ կոչուած մարմիններու յետին ու ըստորին հաշիւներով, հազիւ սպիանալու երես լուծած, - թէև առանց ներքնապէս բժշկուելու - ահա երեւոյթը կտանայ ո՛չ շատ հեռու օրերու մէջ՝ կրկին բորբոքելու իր ամբողջ շարաին գործ ժայթքուածովը, իր շուրջը (ազգին մէջ) ո՛վ գիտէ որչա՞փ ժահր ցանցներու համար :

Այս գարշելի ապագան գուշակելու տեղի կուտան կրկին շարժումներ : Ա. վանքէն գիշերով փոխած և Պոլիս գործելոյ գնացող 7-8 վարդապետներու մէջէն ու մանց՝ չի գիտցուիր ինչո՞ւ, երբևս ազգամասնական ծովազրկայ թեմեր գիծելին : Բ. Դանիէլ Վրդ. ի Ազգ. վարչութեան կողմանէ իր Աթոռին վրայ կենդանի գտնուող Պատրիարքի մը փոխանորդ կարգուելով՝ և փոխանակ անձամբ կոչուածին գիծելու, ինքն ալ իր կարգին փոխանորդ մը (երբորդ պատրիարք) կարգելով երեսուցէ մը շրջակայքէ, որ ո՛չ միաբանութենէն և ո՛չ ալ տեղական կառավարութենէն ընդունուեցաւ ի պաշտօնէ : և Գ. և վերջապէս հուշակարար Աւետիս փոքրաւորի մի քանի օր առաջ Յոպ. պէ գալը, որ մտաւորաւ խայտառակութեան մը ամեն հաւանական նուիրելը կատարեալ կընէ : Ի՞նչ

է այս անհասկնալի կեճուող իրիւրագարծութեան նպատակը, մարդ չի հասկնար : և եթէ մտաւորապէս մարդ փորձուի իր մէջ կարծիք մը կազմել, այն պիտի լինի, որո՞ւս գոյն փորձանքի մը վերսկսուածը :

Իրականութեան այս վիճակին մէջ արդեօք անտեղի՞ է հարցնել, թէ՛ սա Ազգ. իշխանութիւնը ի՞նչ գործ տեսաւ երբևս Պոլիսի հաշուական կոչուած խնդրին մէջ : Ի՞նչ ըրին առ այս զոյգ մը Պատրիարքներ, մանաւանդ սա երկարեւոյ կոչուածը, որ 12 տարի վանքին հացը կերտաւ փոռուորապէս, և յետոյ ալ ճկուն կոչեց իր բնակարանը որ մենափառաւոր և առաջնակարգ շէնքն է վանքին մէջ՝ յետ Պատրիարքարանէ : Ի՞նչ են սա կզերականներու ըրածները, որոնց կը միանան ստեպ և աշխարհականներ, երբ ազգ. գործիչներու շարքին մէջ են անոնք :

Ղևոնդ Վարդապետ հուշիչ չի տար եղբր և Պոլիս է ասորուեր : Լա՛ւ, 5-6 տարի ինչո՞ւ չի նայուեցաւ այդ հաշիւը : Երբ այդ մարդը ալ կեդրոնի ափին մէջն էր, նորէն ազգը չի զօրեց այդ մարդուն հաշիւը առնել : Թէ՛... ուրիշ հաշիւներ մէջ տեղ ելան, բարգաւաճու համար արգէն գոյութիւն ունեցող Դորգեան հանգույցին վրայ : որուն վրայ այսօր նորանոր խառնակութեանց բարդութիւն կը դիզուին ազգին ու երկրին այս փափուկ կացութեան ժամանակամիջոցին մէջ : և դեռ անդին Կ. Պոլիս մէջ Ազգ. վարչութիւն կայ եղբ՛ր : Յաւալի՛ է : Լաւ չէ՞ն ընէր արդեօք այդ Ազգ. վարիչները տալով իրենց աթոռները արժանաւորապէս ինչո՞ւ : Լա՛ւ է ընա՛ւ օրէնք չունենալ, քան գէշ օրէնք մ'ունենալ : կըսէ ֆրանսական առածը : Իսկ մենք ի՞նչպէս կը մընտնեք այս կարգի ճշմարտութիւններ : պատասխանը պարծնականին մէջ փնտռուելու է :

Մենք կրկին կ'անգրադառնանք այս խնդրին, ներկայ երկրպետներու և շարժումներու հետեւութիւնը տեսնելէ յետոյ :

ՄԻ-ՀԱՅ

**ԴԱՏԱՎԱՆ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԵՐԿՐՈՐԴ ԳԻՐԸ ԱՌ ԱՄՆԵ : ՍՐԲԱՋԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ ՀԱՅՐԵ**

« Կարգացի Ձեր Ամենապատուութեան Թագաւորը, որով կը հաղորդէ թէ Պատրիարքական պաշտօնէ հրաժարելու մասին Վարչապետութեան յղած ձեր երկու թագաւորներուն մէջ ցոյց տրուած պատճառներուն և կացութեան մասին հաղորդուած կարգ մը բացատրութիւններ և հաստատիւներ ու Ձեր պաշտօնին ըստ առաջնոյն շարունակութեան մասին յայտնուած բազմաթիւները անբաւական նկատուած են, և թէ Պատրիարքարանի Բարեպետական Ժողովը հրաժարած ըլլալով, ըստ օրինի ընտրուած են ուրիշներ, որոնց անունը հաղորդելով՝ իրենց պաշտօնին վաւերացու մը կը խնդրէք :

« Ձեր հրաժարականին պատճառ ցոյց տուած վիճակին նկատմամբ նախապէս գրուած և բերանացի ու ամեն կերպով տրուած բացատրութիւնները և ներշնչուած

վստահութիւնները կսպասուէր որ բաւական ըլլային համազում գոյացնելու կառավարութեան բարեօրէն արդար մտադրութեանց վրայ, և մինչ կառավարութիւնը ասոր արդիւնքն և ձեր մասին ունեցած կատարեալ վստահութեան և բարեօրէն տրամադրութեան հետեւեալ, յատկապէս կը փափուքէր որ շարունակէք Ձեր պաշտօնը, բնականաբար ցաւալի է որ Ձեր գրութեան կերպը չի համապատասխաներ այս ակնկալութեան : կը յուսանք որ Ձեր ծանօթ խոհականութեամբ և ձեռնհասութեամբ, եղած խոստումները և խորհրդակցութիւնները գարձեալ նկատուելի են առնելով, կը հաճէք շնչել առաջ եկած թիւրիմացութիւնը : հետեւաբար Ձեր ներկայացուցած ցուցակին մէջ ա. նուններն յիշուած և Պատրիարքարանի օրէնքով իրենց պաշտօնը ճշմարտաւոր նորընտիր անդամներուն ընտրութիւնն ալ յարմար նկատուելով այս պատասխանը գրուեցաւ :

Դատական և կրօնից նախարար **ՆԷՃՄԷՏՏԻՆ** »

**ԵՐԿՐՈՐԴ ՄԵՆԵԼԻՔ Բ. ԿԱՅՍԵՐ ՀՐՈՎԱՐՏԱԿԸ**

Հակառակ շրջած զընդհանրուն, թէ Մենելիք կայսր կաթուածահար և հագեւարք է, որոց արձագանգ եղան նաև շատ մը թերթեր ու հեռագրական գործակալութիւնք, Նթովպիոյ Վեհ. կայսեր Մենելիքի առողջութիւնը կատարեալ է, և իր ժողովուրդին բարօրութեանն ու յառաջդիմութեան համար կարևոր Տընորինութիւններ կընէ, ու իր երկրին մէջ արհեստն ու գիտութիւնը ծաղկեցնելու հոգ կը տանի :

Համոզուած թէ՛ եւրոպական զարգացումը իր երկրին յառաջդիմութեանը կընայ նպաստել և օգտակար ծառայութիւն մ'է իր ժողովուրդին համար, վերջերս Սինկի հռչակաւոր տան Կ. Պոլսոյ ճիւղին Տնօրէն Պ. Ռօզէնշիմանի ո՛չ միայն իր կայսերական տան հայթայթելի տիրուղը շնորհած է յատուկ հրովարտակաւ, այլ և « Նթովպիոյ մեծ աստղ » պատուանշանին երրորդ աստիճանը շնորհած է Սինկի Ընկերութեան յարգելի և գործունեայ Տընօրէնին :

Կայսերական վկայաթուղթը հետաքրքրաշարժ և շահեկան պարունակութիւն մը ունենալէ զատ, գեղարուեստական յորինուածք մը ունի, յառաջդիմական զգայունով մը գրուած՝ և հետեւեալն է :

« Յուզայի գեղին յաղթանակող առիւծն Մենելիք Բ. և շնորհիւն Աստուծոյ կայսր եթովպիոյ, ներկայ կը շնորհէ Սինկի Ընկերութեան Կ. Պոլսոյ ճիւղին Տնօրէն Պ. Ռօզէնշիմանին :

« Ողջոյն ընդ քեզ :  
« Մեր տուած նախատիպին (modelle) համաձայն Ձեր մեքենաներով ստեղծագործուած կաթուածակալ կառավարութեան զինանշանը մեզ հասաւ մեր ծառայութեան հայր Մարիէ մը Սրբապիօնի միջոցաւ :  
« Վերջերս ընդունեցինք նաև նոյն մեքենաներով ստեղծագործուած նկարը, որ Սուրբ Կուսին զէմբը կը ներկայացընէ :  
« Գրահատուելով գերազանցութիւնը Ձեր գործարարց, Նթովպիոյ կայսերական Տնօրէն շայտախօսիչ Ժողովը կը շնորհենք Սինկի Ընկերութեան :

« Յետ այսու Ձեր կողմէ պիտի պատրաստուի մեր բոլոր աշխատութիւնները և ի վարձատրութիւն ձեր ծառայութեանց կը շնորհենք Ձեզ «Նթովպիոյն Մեծ Աստղ» պատուանշանին երրորդ աստիճանը :  
« Գրուած Ատին-Ապագա շնորհաց տարուոյ 1909 Մակապի 28ին »

**ՆԱՄԱԿ ԳԱՀԻՐԷՆ**

**ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԷՆ**

Պատ. Խմբագ. Ակըշայոյսի ի Քաղաքին «Տառապանքի Աշխարհէն» գրքը ընդ որ զեռ նոր հրատարակելու օրինակ մը ունենալու բազմը վայելցի :

Կարգաւոր գաւառները արող բնապետութեան այդ ցնցող պատկերը եթէ մէկ կողմանէ սիրտս խշխշաց և զայրոյթի գգացում մը պոսթկաց սրբտէս զէպի այդ անօրինակ շարագործները, սակայն միւս կողմանէ գոհունակութիւն մը զգացի տեսնելով որ յարգելի հեղինակին և ձեր շնորհիւ գէթ խաւարի մէջ չեն մտար գաւառի խեղճ ու անտէրունջ ժողովուրդին վրայ գործ դրուած այդ սարսեղացի բռնաբարութիւնը...

Միայն գիտողութիւն մը՝ եթէ կը հաճիք, Այդչափ հետաքրքրական իրադէպ մը՝ փափաքելի է որ լաւագոյն թղթի վրայ և աւելի խոնամով տպագրուէր : Ձէ՛ր կարելի արդեօք (\*):  
Ընդունեցէք և ալն :  
Ս. Տ.

(\* ) Մ. Խ. - « Հայրաւոր ուղածը կընէ, իսկ աղքատը կըցածը : » Մենք կըցածնիս ըրինք և մանաւանդ դիւրագին, ամեն քսակի մատչելի ըլլալու համար : Այսչափ միայն կրնանք ըսել : Բաւ է որ դուք և ձեզ նման շարքը ալ գոհ մնացած են անոր ընթացումէն, և իրենց գոհունակութիւնը սղնուարք չի ծածկեցին գրաւոր և բերանացի, բան մը՝ ուրկէ մենք ալ գոհ մնալու պատճառներ ունեցանք :

**ՏԵՂԱԿԱՆ**

**Բ. ԽՏԻՎԸ**

Ն. Բ. Խտիվը Ուրբաթ օրը Ապտինի պալատը եկաւ և կէս օրուան աղօթքը կատարեց Սայիտա Ձէյնապի մզկիթին մէջ :

Ն. Բ. Խտիվը մտաւ օրերու մէջ Մէքքէ պիտի ուղեորի ուխտագնացութեան համար :

Առ այս մեծ պատրաստութիւններ կը տեսնուին : Մօտ 10,000 ոսկի ծախսուած է հազարի չափ ուղտեր գնելու համար, որոնք Ն. Բարձրութիւն խտիվին կհան կարասինը պիտի փոխադրեն :

Արարդապետ Ն. Վ. Ալի Պէյ Եահին ևս պիտի ընկերանայ Վեհապետին ուղեորութեան ժամանակ :  
**ՄԵՆԵԼԻՔ**

Անդրիական կառավարութեան լիազոր ներկայացուցիչ Սըր Էլըն Կորսթ քննական պտոյտի մը համար Սուտան պիտի մեկնի, ուր ամիսի մը չափ պիտի մնայ :

**ԼՈՐՏ ՔԻՉՆԷՐ**

Կըսուի թէ առաջիկայ Փետր. ամսոյ մէջ լորտ Գիւլէր Եգիպտոս պիտի գայ և աստի խտիվում պիտի մեկնի, ներկայ գտնուելու համար Կապուտ Նեղոսի վրայ կառուցուած կամուրջին բացման հանգիսին :

ԳՐԷՏԻ ՓՈՆՍԻՑԷ  
Ձրոյց կը շրջի թէ՛ Գրէտի Փոն-

սեյէ դրամատան վարչական ժողովը գիտատարութիւն ունի րնկերական գրամագլուխը աւելցնելու համար նոր պարտաթղթեր հրատարակ հանել :

ՈՃԻՐ ՄԸ

Աղէքսանդրոյ մէջ կառուպան մը հիւանդանոցին յանձնած է մահամերձ Իր և ինք կծիկը դրած :

Ոստիկանութիւնը մահամերձը խնամել տալէ և ուշքի բերելէ յետոյ սկսած է իր հարցաքննութիւնները, և թէև մահամերձը խտուրտանալ է թէ՛ ինք անձնասպան ըլլալ և մեռնիլ կողմէր, սակայն ոստիկանութիւնը ոճիկ հետքեր նշմարելով կը շարունակէ իր հարցաքննութիւնները :

ԿԻՐՈՒՄՈՒՄ

Անցեալ Երեքշաբթի օրը, Պէյրութէն նոր հասած գեղարդէմ կին մը տեղացի փաստաբանի մը ընկերակցութեամբ կառավարչատուն դընացած և յայտնած է թէ՛ ինք իսլամութիւնը պիտի ընդունի ամուսնանալու համար Պէյրութի զօրաբանակին սպաններէն միոյն հետ, զոր չափազանց կը սիրէ եղբր :

Կինը կը պատկանի ելքեր Պէյրութաբնակ եւրոպացի ծանօթ ընտանիքի մը և Մահմէտէի Եհրիյէն զրկուած է պէտք եղած ձեւակաւութիւնները կատարուելու համար :

ԽՈՒՄԻՆԻՍՏԻՆ

Տեղացի բարձր ընտանիքի մը պատկանող կին մը, որ կալուածական կարեւոր հարստութեան մը տէր է եղբր, վերջերս Պոլսոյ մէջ կը մեռնի :

Թուրքիացի պարսի մը, Մահմէտ Ֆէհմի Սառըզ սնտուով, քանի մը ամիս առաջ եգիպտոս կը հասնի վաւերական թղթերով, և հանգուցեալին միակ ժառանգորդը ըլլալը հաստատելով, Եգիպտոսկան իշխանութեանց կողմէ իբրև միակ և օրինաւոր ժառանգ կրնդունուի և տէր կը դառնայ գտնուած հարստութեան :

Բայց անցեալ շաբթու Սահրըգ էֆէնտիին Սահրըգ եղբայրը բողոքարով մը իր հօրաքրոջմէն իրեն ինկած ժառանգութեան բաժինը կը պահանջէ. բաժին՝ զոր իր Սահրըգ եղբայրը խաբէութեամբ իւրացուցած էր :

Բնութիւն մը բացուելով Սահրըգ էֆէնտիին խաբէութիւնը կը հաստատուի և կը ձեռքակալուի իր անազնութիւնը և ազանութիւնը քաւելու համար : Երբեմն ժառանգութիւններն ալ մարդուս գլխուն պէջա կըլլան . . . :

ՉԱՆԱՉԱՆՔ

ԱՒԱՋԱԿՆԵՐ

— Սերպիոյ Մայրաքաղաքէն կը տեղեկացնեն թէ՛ Մարքովա կաշարանի երկաթուղոյ պաշտօնեա-

ներէն և ոստիկաններէ բողոքեալ առաջակարգ մը մը գանազան անգամներով յարձակած է անցորդներուն վրայ :

Շատ մը պաշտօնատարներ օգտուելով այն հանգամանքէն որ ծանօթ են կատարուած ոճիկներուն, իրենք ալ կը մասնակցին ոճիկներու :

Ապագային մէջ այսպիսի եղանակներով թեանց առաջը առնելու միակ միջոցն է իրօզութիւնը իր ամբողջութեամբ հրատարակել :

ԿՈՐՈՒՄՄ ՏՂԱՔՆԵՐ

Ետեկի կազմբախ մէկ հրատարակութեան կը հասկցուի թէ՛ Պոլսոյ մէջ Մարտ ամիսէն ի վեր 68 անշարժահաս տղաքներ մանչ թէ՛ աղջիկ անյայտ եղած են, և փոսնց ամենքն ալ իրաւմ են եղբր թուրք թերթը կը հարցնէ թէ՛ ի՞նչ եղած են այդ մանուկները : Արգիօք չարագործներու շահատակութեանց զո՞հ գայած են : (Ոստիկանութիւնը պէտք է որ գիտնայ այս պարագան . . . )

ՏԱՌԱՊԱՆՔԻ ԱՇԽԱՐՀԷՆ

(ՎԱՐՄԱՊԵՏԸ)

ՎԱՐՄԱՊԱՆ Գ. ԲՐՈՒՏԵԱՆ

Բնակատեղիս կեանքի առնուած

Սոյն խիստ նոսր քաղաքացարժ իր քովէ պը հրատարակ ելած է :

Գահիրէն կինի փոխաբողոքը կրնան ստանալ Արշալոյսի տպարանէն, իսկ Ազգերանոցի շէնքի մէջ :

ԱՂԿԻՍՏԻՆ

ԵՌՔԵՐ

Ս. ՊՍՏԻՍԻՍԻՍ

Ներքին գործոց նախարար Թալէպ պէյ, նորընտիր Բաղաք. ժողովոյ երկու անդամոց — Պ. Պ. Հմայնակ Սոսրովեան և Արամ Հայաճեան — արքայութիւնը ընդունելով, Ամեն . Ս. Պատրիարքի հրատարակածին վրայ խօսած է նետեալ կերպով :

« Առանձին ցուալի աղէտին վերաբերող բոլոր պաշտօնական դիմումները հաւաքած եմ, միասին ըլլալով ողբացեալ Պապիկեանի և Եուսուֆ Քէմալի տեղեկագիրները, և Ամեն . Ս. Պատրիարքի պահանջներուն գոհացում տալու պարագան շեշտած եմ սո որ անկէ : Պատերազմական տեսանկար կողմէ արուած վճիռները ընդ հուպ պիտի բնուին Պոլսոյ մէջ : Եւ այն նոր շինուած տունները՝ որ անձրեւի մը չը դիմանալով փլած են, աւելի հաստատ հիմերու վրայ պիտի կառուցուին այնպէս որ անգամ մ'ալ փլելու սխալը չի գործեն, մինչև իսկ եթէ կարկուտ ալ գայ . . . »

ՈՐԲԵՐԷՆ

Մեր ծանօթ յարգելի ազգայիններէն վկայեալ զեղապարձ Գրիգոր էֆ. Սարաֆեան անցեալ օր Առաջնորդարան ներկայանալով յայտարարած է թէ՛ ի յիշատակ իր հանգուցեալ կողակցին և նոյնպէս հանգուցեալ անդրանիկ աղջկան, տարեկան 500 զոյ. պատրաստ

ԵՂԻՇԷ ՓՈՍՊՈՒՔՅԵԱՆ

ՇԱՐԷ ԱՊՏ ԷՆ ԱՉԻՉ ԴԱՐԱԳՕՂԻՆ ԴԻՄԱՑ

Միակ ներկայացուցիչն է Ազգ. Հիւանդանոցի սիկարի թուղթերուն : Կը յաճառէ մեծաքանակ և փոքրաքանակ 1910 տարուայ պատի և գրպանի օրացոյցներ գնելու համար միայն մեր վաճառատունը գիտնելու է, և կամ գիւրութեան համար Վերջալոյսի Տպարանը :

է վճարել. ամէն տարուայ Յունուար ամսուն մէջ, յատկացնելու համար զատարակութեանը կիրակեցի օրը 5 իր մը, մինչև որ այս վերջինը կանխաւոր չըջանուարտի վկայական քատանայ :

Առաջնորդարանէն խոստացուած է Պատրիարքարան գրի այս ևստին պէտք եղածը անօրինելու համար :

ԿԱՐԵՒՈՐ ԿՏԱԿ

« Բանասէր » յարգելի Խմբագիր Տ. Կ. Բամաճեան, ասկէ յոտաջ յորդորած էր Պ. Եուսուցեան, որ իր հարստութեանը ազգին կտակէ, որովհետև ժառանգորդ չունէր :

Պ. Եուսուցեան սակայն՝ 150 000 ֆրանկ յատկացուցած է ստուգարանական բառարանի մը տպագրութեան համար, կտակակատար կարգելով Տ. Բամաճեանը :

Կ. Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանը նախանձելով Պ. Բամաճեանի մեծ յաջողութեանը վրայ զանազան ատարակութիւններով ջուրը ձգած էր յարգելի Բանասէրին իւրոտ պատասոր, և յարմար տեսած էր քանի մը դր. տարով Տ. Բամաճեանի ձայնը կտրել և մնացեալը կլլել . . . :

Տ. Բամաճեան շատ մը յոգնութիւններէ յետոյ, վերջապէս յաջողած է 2500 ոսկի ձեռք անցնել Պատրիարքարանէն, որուն մէջէն՝ կրտուի թէ՛ 1000 ոսկու չափ ալ ժողովականներէն ոմանք ինչ փութախ ստեր են :

( Ականջդ իստի Շահրիկեան, մարդ Դաշնակցականի ստամբու ունենալու է այդչափ գումար մէկէն մարտիու համար : Հիմայ կը հասկնամ կոր թէ՛ ինչո՞ւ մեր Գահիրէնը կրտու որ միլիոնիս չըլլալուս պատճառը Դաշնակցական չըլլալս է եղբր . . . )

ՆՈՒՐԱՏՈՒՆԻՍ

« Արշալոյսի Խմբագրութիւնը 100 օրինակ « Տատարանքի Աշխարհէն » կը զրկէ Կ. Պոլսոյ Պատրիարքարանը, Միւնստ Էֆ. Չերապի հոսկով, որպէսզի յո՞ճնուի Սահնակատութեամբ Յ. էֆ. Գորեանի կազմուած Ակնայ Կըրթական Ընկերութեան » գրքերու վաճառման ամբողջ հասոյթը (100 ֆրանկ) յատկացնելու համար Ակնայ Ազգ. վարժարանին ազգատղայրդականներու զատական պէտքերուն :

ՀԻՆԱՊԻՐ

Կ. Պոլսոյ 14 նոյ. — Օսմ. երեսփոխան Տր. Տաղաւարեան ձր. բանաչի դեսպան Պ. Պոնթառի տեսած այցելութեան առթիւ, Սամսոնէն դէպի Սրվազ երկաթուղոյ գիծ մը հասուստեղու ժրագրի վրայ խոսուած է : Այս ժրագիրը Ըրանսական սիւնիզաի մը ֆենուրեանէն անցնելէ յետոյ պիտի ներխայտցուի :

Կ. Պոլսոյ 15 նոյ. — Իշխման Մուսաւաւի Հասան եւ Սիւրէյան Պօսրանի Օսմ. Խորհրդարանին դերասեանպէս ընտրուած են :

Կ. Պոլսոյ 16 նոյ. — Ազգայնական Մամուրը կը գնահատէ Սուրբանի գահաճառը եւ ժողովուրդին կը պահանջէ որ կաշարութիւնը գորտուր եւ արտախիւն բոյր միջանք-սուրխներէ եւ ազդեցութիւններէ անկախ պահելու համար պէտք է զոնողութիւնները չ'խնայէ, Լրագիրներէ ունակ կը նկատեն թէ՛ զահաճառին մէջ Աշխատական եւ Կրտսական խնդիրներու մասին ակնարկութիւն չ' եղած :

Ս. Բեքերսպուրկ 16 նոյ. — Թուրք դեսպանը եւ Պ. Իզյոյսի երկար սեւակցութիւն մը ունեցած են, որ Կրտսական խնդրոց կը վերագրուի :

Կ. Պոլսոյ 17 նոյ. — Սամու կըլիի կացութիւնը մտահոգութիւն կը պատճառէ : Երկիւղ կայ թէ խորհրդարաններ ծագին :


Կ. Պոլսոյ 17 նոյ. — Հանուճայն Թուրֆո-Պուլխար Բոբոֆօլին, որ Սոճիաի Սուրանիյէի (խորհրդարան) յանձնուած է, Պուլխարիոյ բոլոր ժողովուրդին հարցը կարգադրուած է այնպէս ինչպէս որ է բոլորիսական յոյնները :

Կ. Պոլսոյ 17 նոյ. — Ասանայի մէջ տեղացոյ տեղաստարակներ մեծ վնասներ պատճառուած են : 500 տուն կործանուած են եւ ուրիշներ ալ նոյն վնասներ ենթակայ են : Մարդու կորուստ չկայ : (Մ. Խ. — Այս կործանած տները նոր շինուածներէն են արդեօք . . . )

Վիսնու 18 նոյ. — Լրագիրներէ ունակ կրտսե թէ՛ բոլորիս գրքագն մնացած է պաշտպան տեսուքանէն սուս պատճառով, որ կը վերաբերի Կրտսեի զինուորական եւ նաւային բարեկարգութեան :

Կ. Պոլսոյ 19 նոյն. — Յունական քերթեան Արոբոյիսի, Ծրոբոսի, Սրիսիսի, Էմպրոսի եւ Խրոնուսի Թուրֆիս մուսֆր արգիւտած է : ( Եւրոպի Թուրֆիոյ Սահնակարական Կառավարութեան Մամուրը անկեանկասարեւայ սպասութիւն կը վաշեղէ Թուրֆիոյ մէջ եւ գրաֆենութիւն թեւտ չկայ . . . )

Հայկական փեճակահանութեան ազգարարութիւնը և շահող թիւերը տեսնել չորրորդ երեսին մէջ :



ԿԱՐԱՊԵՏ ԳԱՍԱՊԵԱՆ

ՇԱՐԱ ՄՕՉԱՄՄԷՏ ԱԼԻ, ՏԱՐՊ - ԷԼ - ԷՆԱՊԱ ԹԻԻ 1

ԿԵՄԷ ԷՆ ԿՈՒՂՐԱՄ ՄՉԿԻՐԻՆ ՃԻՏԵ ԴԻՄԱՑ

Երկար տարիներ կարեւոր տուններու մէջ աշխատելով փորձառութիւն ստանալէ յետոյ, այժմ իր սեփական վաճառատունը ունի, ուր կը վաճառուին թէ՛ նոր և թէ՛ գործածուած կարի մեքենաներ ամեն տեսակէ, միշտ առաջնակարգ քաղաքացիներու ապրանքները բնութեւի կը գնէ կամ նորերու հետ կը փոխանակէ կարի հին մեքենաները : Իրմէ գնուած նոր մեքենաները հինգ տարի ձրի կը նորոգէ : Նորոգութեանց համար երբ պէտք ըլլայ՝ յաճախորդաց տունները կայցելէ և իր կատարած նորոգութիւնները տարիներու համար կ'երաշխաւորէ : Կը վաճառէ նաև ամեն տեսակ կապի վառարաններ և ատոնց նորոգութիւնները կ'ընէ անմրցելի յաջողութեամբ և գիւրագնի : Իրեն զիմով բոլոր յաճախորդներն ալ գոհ պիտի մնան :

